այցելութիւն ընելով և զմեզ անխը-նամ թողլով մեկներ է։ Հիմակ ալ շատ չեղաւ՝ Եփրեմ վարդապետը ծայրագոյն անուամբ, Կիրակոս Կա-թողիկոսի կոնդակաւ և Արիստակէս եպիսկոպոսի յանձնարարական գրովը այս կողմը խրկուեցաւ։ Այս Աւշա-ռունի վարդապետը, բարքովը թե-թեւ քան զիւր համբաւը, առանց խոհական ընտրութեան արժանաւոր անձինքը թողլով, և տէրութեան ա-ւելի հարկ տուողները զատելով Թա-ղական խորհրդոյ անդամ ընտրուելու արժանաւոր են ըսելով, 12 հոգիէ բաղկացեալ ժողով մի կազմեց, որոնց և ոչ մէկուն ձեռքէն բան մի կու-գայ։ Մեր ազգին արհամարհանաց վիճակէն աղատելու ամ յոյսերնիս չը մնաց. եթէ սրբութիւնդ ալ (առ Օ.աքարիա վարդապետն) այս եղե-լութիւնները ի Կ. Պոլիս և Յերու-սաղէմ չիմացընես, վերջին յուսահա-տութեան ծայրը հասած եմք։ Մեր լսածին նայելով՝ սուրբ Յերուսաղէմի Նորընտիր Պատրիարքը ազգասէր անձ մի է. եթէ եղելութիւնները ճիշտ գրելով իմացընես, կարելի է մեզ օգնութիւն մի ընէ։ Յիշ կամ ի Պոլիս առ Ազգային Վարչութիւնը գրելով՝ անկէ պաշտպանութիւն մի գտնել չտաս, գլխուներս ճարը ուրիշ կերպ տեսնելու եմք . . . »։ Արդարեւ, կ՚ըսէ մեր ականատես և ականջալուր Թղթակիցը, իրենց բոլոր գանգատ-ները իրաւացի են, որոնց կարեկից ըլլալով, և առ ժամն չկարենալով բան մի ընել, միսիթարեցի զիրենք բարե-յորդոր ըլլալով՝ իրենց յոյսը հաս-տատուն ունել Ազգային Վարչու-թեան վերայ, որ օր մի չէ նէ՝ օր մի անշուշտ դէպ ի իրենց պիտի դար-ձընէ իւր ուշը, թէ որ կարգը գա-լու ըլլայ։

Այսոնք են աւասիկ Բէյսաղ գիւ-ղի ազգայնոց արդի վիճակին վերա-յօք տուած քաղուածոյ տեղեկու-թիւնները։

Հարիւրորդ ծանոյցում։

Ս. Աթոռոյս կառավարութիւնը անհրաժեշտ պարտաւորութիւն կը համարի ծանուցանել ընդհանուր աղ-գիս, որ Ամենապատիւ Տ. Տ. ԵՍԱՅԻ Սրբազան Պատրիարք Հօր գահակա-լած օրէն սկսեալ՝ բոլոր այն միաբա-նից թէ՛ վարդապետ և թէ սարկա-ւագ, որոնք ի Ս. Աթոռէս հեռաց-եալ են, իրենց ձեռքը գտնուած վը-կայագիրները աչքէ անցընելով, ա-նոնք որ իրենց յօժար կամքը և կամ ուրիշ որ և է պատճառաւ հրաժա-րած են Միաբանութենէս, զսհե-լով Ս. Աթոռոյս վերայ իրենց ունե-ցած միաբանական իրաւունքը, ա-մենեւին իբրեւ միաբան Ս. Յակո-բայ վանաց չընդունուին։ Այսն զե շատ անգամ պատահած է և կը պա-տահի միշտ, որ հրաժարեալ վարդա-պետ մի հայաբնակ քաղաքներ պտը-տելով, և զինքը իբրեւ միաբան Ս. Աթոռոյս կեղծելով, շատ նուէրներ և ողորմութիւններ ժողված են յա-նուն Յերուսաղէմի. և միամիտ ժողո-վուրդը շատ տեղ սովորութիւն չու-նենալով կարգաւորաց վկայագիրնե-րը փնտռելու և ըստ այնմ վարուե-լու անոնց հետ. այլ կամ անոնց ձեռ-քերուն վերայ մահտեսութեան նը-շաններ տեսնելով, եւ կամ իրենց ուխտաւորութեան ժամանակ նոյն կար-գաւորները Ս. Աթոռոյս մէջ միա-բան ճանչցած ըլլալով, միամտօրէն կը հիւրասիրեն զիրենք իբր Ս. Յակո-բայ միաբան, և նուէրներ եւս կ՚ընդ-

digitised by A.R.A.R.@

ծայեն յանուն Ս. Աթոռոյս։ Ոմանք եւս իրենց յաժար կամքը ընդդէմ ամենայն յորդորանաց և համոզակեր բանից Սրբազան Պատրիարք Հօր հրաժարելով Ս. Աթոռոյս միաբանական իրաւունքէն և հրաժարման վերկայագիր ընդունելէն յետոյ, պարտած տեղերնին զերենք Ս. Երուսաղէմի միաբան կ'անուանեն և այնպէս կը ստորագրեն իրենց անունը, ինչպէս զարմանքով տեսանք հրաժարեալ Մարտիրոս վարդապետի սուրբ Կարապետի վանքէն առ Մասիսն ուղղեալ նամակին մէջ գրած ստորագրութիւնը։ Յիշեալ վարդապետը ոչ միայն միաբանութենէ հրաժարեալ է, այլեւ ոչ իսկ ի սուրբ Աթոռս ձեռնադրուած է։ Ուստի կը ծանուցանենք օրհնեալ Աղգիս, որ այսպիսեաց ստորագրութիւը խարդախութի է, և է անընդունելի Ս. Աթոռոյս թէ՛ ինքը և թէ իւր ստորագրութիւը, և կը ցանկամք որ նոյնպէս համարուի նաեւ ընդհանուր Աղգիս դիմացը։

Դարձեալ՝ որ եւ իցէ եկեղեցական միաբան մի, որ առանց հրաժարելոյ ի Միաբանութենէս՝ հրամանաւ Սրբազան Պատրիարքին, կամ օգափոխութեան և կամ ուրիշ բանաւոր պատճառաւ մի յօտարութեան կը գանուի, առանց իւր վկայագիրը աչքէ անցընելու՝ իբրեւ միաբան Ս. Աթոռոյս չնկատուի, վասն զի կրնայ ըլլալ որ հրաժարեալ միաբան մի մասնաւոր նկատումներով ծածկել ուզէ իւր հրաժարման վկայականը, և իբր օգափոխուած ելած ձեւացընելղինքը։

Երշալոյս Երարատեան լուսոյ ՀԷՋ-ը։

Յայտնի է մեր բարեմիտ ընթերցողաց, որ Երշալոյս պատուական լրագիրը մեր Օմիւռնիոյ Մեսրոպեան դպրոցի ներկայ վիճակին վերայ տրուած մի քանի ստուգագոյն տեղեկութիւնները, ՀԷՊԷՐՈ-ՒԻ-Ն անուանած էր ընդդէմ ոգւոյ միաբանութեանս, այս անգամ իւր 786 թուովը փութացեր է իւր խօսքը խոնարհաբար եւ առնուլ, զգալով սոյն բառիս ծանրութիւնը, և բարեմտութեամբ գրուած ըլլալը կը խոստովանի։ Ուրախ եմք մեծարոյ խմբագրին խոնարհասրտութեանը վերայ, որ կրնայ բարի օրինակ լինել և այլոց յանդէտս սխալողաց։ Իսկ եթէ դարձեալ մեր գրածները սխալ տեղեկութիւններ կը համարի, կը հրաւիրեմք զընթերցողները որ ուշադրութիւն կարդան Մէմրումէի էֆքեարը, Մասիսն ու Մէճմուան, որոնց մէջ անաչառապէս բանագատութեան առնուած են և մեր ըսածներուն ճշմարտութեանը կը վկայեն։

Երժանապատիւ Խորէն վարդապետը, որ օգափոխութեան համար երեք ամսէն ի վեր է հեռացեր էր սուրբ Աթոռէս, անցեալ շաբթու վերադառնալով, սկսաւ վարել իւր առջի պաշտօնը։ Յայտնի է որ յիշեալ Երժ. Հայրը Տպարանի տեսուչ է և միանգամայն Ուսումնական խորհրդոյն անդամ։ Ամենապատիւ Սրբազան Պատրիարքը իրեն յանձնեց նաեւ այս անգամ Յառանգաւորաց դպրոցի մէջ կրօնագիտութեան դասատուութիւնը։

— Անցեալ ամսոյս մէջ Յառանգաւորաց դպրոցին համար երկու աշակերտացու եւս գալով, մէկը Օվաճրգէն Սերովբէ Պօղոսեան և միւսը Շապին — ղարահիսարէն Յովհաննէս Տատեան անուն. որոնք լատին վա-

digitised by A.R.A.R.@